«ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան Նուբարաշեն 11փ. 21-26
հեռ՝ 094 27 77 93, 010 57 17 60

ՀՀ Լոռու մարզի

Ալավերդի համայնքի ղեկավար

պարոն Դ.Ղումաշյանին

Գրություն

Հարգելի պարոն Ղումաշյան.

Համաձայն 06.02.2020թ.-ին կնքված SPAP II W-1.1.1/1.TC պայմանագրի, մեր կազմակերպությունն իրականացնում է ՄԱԾ-ի Ալավերդի ՏԿ-ի կառուցման աշխատանքները:

Հայտնում ենք, որ շինաշխատանքները պայմանագրով սահմանված ժամկետում չենք ավարտել, քանի որ դրանց իրակնացման ընթացքում մեր հանրապետությունում տեղի են ունեցել ֆորս-մաժորային իրավիճակներ: Կառավարության 16 մարտի 2020 թվականի N 298-Ն որոշմամբ 16.03.2020 թվականից մինչև 11.09.2020 թվականը՝ 6 ամիս, հանրապետությունում հայտարարվել է արտակարգ դրություն կապված, որի ընթացքում դադարեցվել են բոլոր տեսակի աշխատանքները, համաձայն ՀՀ կառավարության 11 սեպտեմբերի 2020 թվականի N 1514-Ն որոշման 11.09.2020 թվականից մինչ 20.06.2022 թվականը ներառյալ սահմանված է կարանտին, որը էապես դժվարացնում է աշխատանքների իրականացումը: 27.09.2020 թվականին սկսվել է 44 օրյա պատերազմը և ՀՀ կառավաության 27 սեպտեմբերի 2020 թվականի N 1586-Ն որոշմամբ հայտարարվել է ռազմական դրություն ու զորահավաք: Պատերազմի ընթացքում և դրան հաջորդած ամիսներին ամբողջությամբ խաթարվել է աշխատանքների իրականացումը: ՈՒզում ենք նշել, որ արտակարգ դրությունը և պատերազմը տեղի են ունեցել շինարարության համար բարենպաստ ժամանակահատվածում:

Հաշվի առնելով վերոնշյալը հայտնում ենք, որ մեր կազմակպությունը միտումնավոր չէ աշխատանքների կատարման պայմանագրային ժամկտը խախտել: Խնդրում ենք Ձեզ 08.04.2019 թվականին տրված N 09 շինթույլտվության ժամկետը երկարացնել մինչև 01.06.2024 և կազմակերպության վարչական պատասխանատվության չենթարկել հաշվի առնելով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածը՝Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, քաղաքացիների իրավունների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպսի գործողությունը, որի համար օրենսդրությամբ նախատսված է վարչական պատասխանատվությունը, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ ՍԴՈ-920 որոշումը, 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ ՍԴՈ-1048 որոշումը և 2014 թվականի հունիսի 03-ի թիվ ՍԴՈ-1153 որոշումը:

Հարգանքով տնօրեն՝ Ե.Գևորգյան

25.01.2024թ.